

ԲԱՆԱՎԷՃ «ՄԽԻԹԱՐԵԱՆ» ՎԱՐՇԱՐԱՆԻՆ ՄԱՍԻՆ

Posted on January 24, 2011 by Keghart



Category: [Opinions](#)



[Asbarez.com](#), 21 Յունուար 2011

✘ Երեք տարի առաջ, երբ Լոս Անճելըսի «Միախորհրդ» վարժարանը մնաց առանց միախորհրդ վարդապետի, միաբանութեան ընդհանուր աբբահայրը՝ հայր Եղիա Քիլադպեան, դպրոցը ամեն գնով շարունակելու համար անոր տնօրէն նշանակեց Ոսկան Միախորհրդանը:

[Asbarez.com](#), 21 Յունուար 2011

✘ Երեք տարի առաջ, երբ Լոս Անճելըսի «Միախորհրդ» վարժարանը մնաց առանց միախորհրդ վարդապետի, միաբանութեան ընդհանուր աբբահայրը՝ հայր Եղիա Քիլադպեան, դպրոցը ամեն գնով շարունակելու համար անոր տնօրէն նշանակեց Ոսկան Միախորհրդանը:

Նոր տնօրէնը չարդարացուց իր վրայ դրուած յոյսերը, ուստի 2009ի Նոյեմբերին, աբբահայրը անձամբ Լոս Անճելըս երթալով՝ արձակեց տնօրէն Ոսկանը իր պաշտօնէն, ինչ որ առիթ տուաւ նաեւ խռովութիւններու դպրոցէն ներս: Արձակուած տնօրէնը իր համակիրներուն հետ, թերթերու եւ համացանցի միջոցով տգեղ պայքարի մը սկսաւ աբբահօր եւ միաբանութեան դէմ՝ անհեթեթ վերագրումներով մինչեւ իսկ Վատիկանի հասցէին: Միաբանութիւնը չպատասխանեց այդ գրութիւններուն, բայց անոնք շարունակուեցան մինչեւ վերջերս:

Տնօրէնը արձակելէն ետք, աբբահայրը դժբախտաբար առանց միաբանութեան ընդհ. վարչութեան հաւանութիւնը ստանալու, աճապարեց տնօրէն կարգել Յովհաննէս Խոստեղեանը: Շուտով բողոքները բարձրացան նաեւ այս երկրորդ աշխարհիկ տնօրէնին դէմ, ուստի աբբահայրը ստիպուեցաւ 2010ի Դեկտեմբերին նամակով մը գործէն արձակել զայն:

Տնօրէնութեան պաշտօնի այդ փոփոխութիւնը գործադրելու եւ դպրոցի կարգապահութիւնը հաստատելու համար, միաբանութեան ընդհ. վարչութիւնը լիազօրեց Վիեննայի Միախորհրդ վանքի աբբահայր հայր Պօղոս Գոճանեանը, որ Ամանորի դպրոցական արձակուրդին Լոս Անճելըս հասնելով՝ քննարկեց կացութիւնը, ուսուցիչներէն շատերուն հետ խօսեցաւ առանձին, տնօրէնին հետ արձակեց նաեւ նոր առնուած աւելորդ ուսուցիչները, տնօրէն կարգեց միաբանութեան վարդապետներէն Դաւիթ Ղազարեանը, անոր աջակցութեամբ դպրոցէն ներս կարգութիւններ ըրաւ. Ամանորի արձակուրդէն ետք, Յունուար 10ին դպրոցը սկսաւ իր բնականոն ընթացքը, բոլորովին խաղաղ մթնոլորտի մէջ:

Երկու աշխարհիկ տնօրէններու պաշտօնավարութեան ժամանակ, բացի որոշ անկարգութիւններէ, գլխաւորաբար անհաշիւ ծախսերով յառաջացած դպրոցի

տնտեսական ծանր տագնապն էր, որ ստիպեց միաբանութիւնը տնօրէնութեան այդ անսովոր փոփոխութեան, ուսումնական տարուան ընթացքին:

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Վիեննական Մխիթարեան Միաբանութեան Իսթանպուլի Վանատան Հայրերու

Իսթանպուլ ,26 Յունուար 2011

Լուս Անճելլոսի «ԱՍՊԱՐԵՉ» օրաթերթին մէջ 21.01.2011 թուականին հրատարակուած է « Հաղորդագրութիւն՝ Լուս Անճելլոսի «Մխիթարեան» Վարժարանի Մասին» խորագրով յայտարարութիւն մը «ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ» անունով:

Այս հաղորդագրութիւնը հարկ է ստորագրուէր նոյն ինքն հեղինակին կամ հեղինակներուն կողմէ , քանի որ Միաբանութիւնը կազմող միաբաններէն ոմանք իրազէկ ըլլալով ներքին իրադարձութիւններուն , համակարծիք չեն անոր բովանդակութեան:

Ուստի , տարիներու ընթացքին պատահած դէպքերը խեղաթիւրումէ ազատելու նպատակով ,պատշաճ համարուեցաւ կատարել կարգ մը մատնանշումներ՝ հանրութեան լուսաբանութեան համար:

1-Մխիթարեան Վարժարանը 1979 ին բացաւ իր դռները մեր ապագայ սերունդին դաստիարակութեան: Այդ օրէն սկսեալ , մինչեւ անսակարկ ծառայութիւն մատուցող,ծերունագարդ եւ բազմարդիւն Հ.Օգոստիոս Վրդ.ին, այժմու Ընդհ. Աբբահօր գրաւոր հրահանգով դպրոցէն արտաքսուիլը , նոյնիսկ շէնքէն ներս ոտք չդնելու սպառնալիքով , Վարժարանը երբեք չէ մնացած առանց Մխիթարեան Վարդապետի:

Հետեւաբար անհիմն է գրուածը , թէ «երեք տարի առաջ ,երբ Լ.Ա.ի Մխիթարեան Վարժարանը մնաց առանց Մխիթարեան Վարդապետ»ի յայտարարութիւնը:

2-Ընդհ. Աբբահայրը Միաբանութեան կրթական հաստատութիւններու հանդէպ, ընդհանրապէս իր անհետաքրքիր դիրքորոշումով, ոչ թէ ուզած է (ինչպէս հաղորդագրութեան մէջ կը յիշուի) «ամէն գնով շարունակել դպրոցը » , այլ ընդհակառակը ամէն գնով կործանելու սատարել:

3-Այս նպատակին հասնելու համար Ընդհ.Աբբահայրը, ուղարկուած տեղակատու նամակարգութիւններն չգոյ համարելով «արծակած է» (ասութիւնը գործածուած է հաղորդագրութեան մէջ) Վարժարանին վերելքին աշխատող Տնօրէն Ոսկանը եւ նիւթական ու բարոյական քանդիչ, աւերիչ գործունէութեան սատարման համար առանց Ընդհ. Վարչութեան հաւանութեան Տնօրէն որոշած է, Ս.Ղազարու ընծայրանէն իրեն քաջ ծանօթ դասընկերը՝ Յովհաննէս Խոստեղեանը:

4-Այս անախորժ դեպքերը բարի եւ ողջամիտ անձերու հոգիներէն ու սրտերէն ներս բողոքի եւ ընդվզումի աղաղակներ բարձրացուցած են ի տես գործադրուած մենքենայութիւններու:

5-Եւ ի վերջոյ այնքա՛ն զոհողութիւններով ու բազմաթիւ յայտնի եւ անյայտ անձերու, հաստատութիւններու աջակցութեամբ գոյացած ու յաղթանակի ճամբուն վրայ յառաջացող ինքնաբաւ այս վարժարանը հասցուած է սնանկութեան սեմին եւ առանց համոզումի , ստիպողաբար 2010 Դեկտեմբերին նամակով մը արձակուած է երկրորդ տնօրէնը ` Խոստեղեանը:

Չարմանալին այն է որ կանխազգուշական ոչ մէկ միջոց ձեռք կ'առնուի:

ՏԷՐ տեսցէ եւ ողորմեսցի :

Իսթանպուլ ,26 Յունուար 2011

Վիեննական Միիթարեան Միաբանութեան Իսթանպուլի Վանատան Հայրեր

